տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությանը՝ կատարելու որոշակի գործողություն, այն է՝ կայացնել «ԼԵՌՊՈԼԴ ԵՎ ԸՆԿԵՐՆԵՐ» ՍՊ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ որոշում՝ մինչև սույն գործով վերջնական դատական ակտի կայացումը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 136-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հայցը մերժելու մասին վճիռ կայացվելու դեպքում հայցի ապահովման միջոցները պահպանվում են մինչև վճռի օրինական ուժի մեջ մտնելը:

Հայցի մերժման պայմաններում Դատարանը գտնում է, որ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի 13.07.2023 թվականի որոշմամբ կիրառված հայցի ապահովման միջոցը (միջոցները) վճիռն օրինական ուժի մեջ մտնելու պահից պետք է վերացնել:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 189-րդ, 191-րդ, 192-րդ, 234.12-րդ հոդվածներով՝ Դատարանը

ՎՃՌԵՑ

1. «ԼԵՌՊՈԼԴ ԵՎ ԸՆԿԵՐՆԵՐ» ՍՊ ընկերության հայցն ընդդեմ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության՝ 2021 թվականի սեպտեմբերի 23-ին կնքված Պետության կարիքների համար կապալային աշխատանքների կատարման պետական գնման թիվ N ՏԿԵՆ-ՀԲՄԱՁԲ-2021/26Շ-2 պայմանագիրը միակողմանի լուծելու մասին որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին, մերժել:

2. Դատական ծախսերի հարցը համարել լուծված:

3. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարան դատարանի 13.07.2023 թվականի որոշմամբ կիրառված հայցի ապահովման միջոցը (միջոցները) վճիռն օրինական ուժի մեջ մտնելու պահից վերացնել:

4. Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ հրապարակման պահից մեկամսյա ժամկետում:

ԴԱՏԱՎՈՐ՝ Ս. ԽԱՉԱՏՐՅԱՆ